

## ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ\*

Անդրանիկ Օզանյան և Թովմաս Նազարբեկյան.  
գուգակշիռներ<sup>1</sup>

**Բանալի բառեր** – Ա-Դո, գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյան, գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյան, գեներալ-լեյտենանտ Եվգենի Վիշինսկի, Ջևդեթ բեյ, գնդապետ Ալ. բեյ Մամիկոնյան:

Պատմական փորձը սովորեցնում է, որ արտակարգ պայմաններում, հատկապես հեղափոխությունների և հեղաշրջումների ժամանակ, հաճախ քաղաքական հրապարակ են դուրս եկել այնպիսի անհատներ, որոնք, չլինելով գինվորականներ և չզբաղեցնելով հրամանատարական բարձր պաշտոններ, աչքի են ընկել իրենց քաջագործություններով ու սխրանքներով:

Արմատական փոփոխությունների սուր պահանջմունքը առանձին անհատների առջև բացել է ռազմական գործում հաջողություն արձանագրելու հնարավորություններ: Նման մարդիկ, ինչպես, օրինակ՝ Օլիվեր Կրոմվելը, Հովակիմ Սյուրատը, Սեմյոն Բուդյոննին, Կլիմենտ Վորոշիլովը և ուրիշներ, արտակարգ պայմաններում կարողացել են իրենց ձեռքը վերցնել ռազմաքաղաքական իրավիճակը և լուրջ հաջողությունների հասնել: Սակայն դրանից հետո՝ կանոնավոր բանակի առկայության պայմաններում, անձնական քաջությունն իր տեղը գիջում էր նեղ մասնագիտական կրթությանը, որին չտիրապետողն ի վերջո հանդիպում էր լուրջ խոչընդոտների ու դժվարությունների: Ուստի նոր իրավիճակում ռազմական գործին չտիրապետող նշանավոր անհատները հաճախ թույլ էին տալիս աններելի սխալներ, որոնց հետևանքով տուժում էր ընդհանուր գործը:

20-րդ դարի առաջին տասնամյակների հայ իրականության մեջ նույնպես իրեն զգացնել տված նման երևույթի քննությանն է նվիրված մեր առաջին անգամ հրապարակվող Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) հոդվածը, որը 1918 թվականի հերոսամարտերի պատմության ընդհանուր

\*Ընդունվել է տպագրության 27.04.2017:

<sup>1</sup> Այս ենթավերնագիրն ավելացվել է խմբագրության կողմից՝ քննարկվող նյութն ավելի ընկալելի դարձնելու համար: Խմբ.:

խորապատկերի վրա ներկայացնում է երկու հզոր անհատականություններ՝ ազատագրական պայքարի նվիրյալ, ժողովրդական հերոս, իսկ հետագայում՝ գեներալ **Անդրանիկ Օզանյանի** և արհեստավարժ գինվորական, Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ **Թովմաս Նազարբեկյանի** (Ֆոնա Նազարբեկով) հակամարտության ձևավորման պատմությունը:

«Անխուսափելին» հոդվածում Ա-Դոն իր պարտքն է համարել մանրամասն կանգ չառնել Անդրանիկի կերպարի, նրա մղած կռիվների վրա, քանի որ հայդուկապետի կենսագրությունը հայտնի էր հասարակության գրեթե բոլոր շերտերին: Նա որոշել է կենտրոնանալ ավելի քիչ հայտնի Թ. Նազարբեկյանի անձի վրա:

Թ. Նազարբեկյանի մարտական ուղին սկսվել է դեռևս 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին: Սակայն, որպես զորավար, նա իր անունը վաստակեց 1915 թ. ապրիլի 16-ից՝ 18-ը Հյուսիսային Պարսկաստանի Դիլման քաղաքի շրջակայքում տեղի ունեցած ձակատամարտի ժամանակ, երբ նրա համարձակ և կշռադատված գործողությունների հետևանքով Խալիլ բեյի դիվիզիան պարտություն կրեց: Արդյունքում՝ օսմանյան հրամանատարությունը չկարողացավ իրականացնել իր ծրագիրը՝ ներխուժել Նախիջևանի գավառ ու Գանձակի նահանգ, ոտքի հանել տեղի մահմեդականությանը և պայքար սկսել ռուսների դեմ:

Հենց Դիլմանի ձակատամարտը հնարավորություն տվեց երկու հզոր անհատներին ավելի մոտիկից ճանաչել միմյանց: Մարտական գործողությունները ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաձակատում ընթանում էին սրընթաց. օսմանյան բանակները պարտություն պարտության հետևից էին կրում: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց 1917 թ. ռուսական երկու հեղափոխությունների հետևանքով: Հոկտեմբերին իշխանությունը զավթած բոլշևիկների կոչերով Կովկասյան բանակը սկսեց լքել ռազմաձակատը: Օգտագործելով աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունը՝ 1918 թ. փետրվարին օսմանյան բանակն անցավ հարձակման: Նոր կազմավորվող հայոց զինուժը և աշխարհագրայինները իրենց ուժերի և սպառազինության սահմաններում դիմագրավում էին ոտխիս: Արտաքին թշնամուն ավելացավ ներքին թշնամին՝ Օսմանյան կայսրության կողմից հրահրվող քուրդ-թաթարական ավազակախմբերը:

Ու թեև 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի արդյունքում հայությունը փրկվեց վերջնական ոչնչացումից, բայց նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը հունիսի 4-ին հարկադրված էր հաշտություն կնքել բավականին ծանր պայմաններով: Հասարակության մի մասը չէր ցանկանում հավատալ, որ հակառակորդի նկատմամբ հաղթանակ տարած կողմը կարող է նման պայմանագիր ստորագրել: Ու մինչ այդ՝ Մայիսյան հերոսամարտերի եզրափակիչ փուլում, Դսեղում մեկուսացած և Ղարաքիլիսայի ձակատամարտի ժամանակ փաստացի դասալքության դիմած Անդրանիկը, չընդունելով Բաթումի հաշտությունը, փորձում է իր զորամասով և նրան ուղեկցող մի քանի հազարի հասնող գաղթականներով Պարսկաստանով հասնել Իրաք ու միանալ բրիտանացիներին՝ համատեղ ուժերով թշնամու դեմ պայքարելու համար: Ցավոք, այդ գործողությունն անհաջողություն է

ունենում, քանի որ Պարսկաստան մուտք գործելուց հետո նա հանդիպում է լավ սպառազինված ու մեծաքանակ հակառակորդին:

Պատերազմի եզրափակիչ փուլում որոշակի դերակատարություն ունենալով Զանգեզուրի պաշտպանության գործում, բայց այդպես էլ հրաժարվելով ընդունել Ղարաբաղից ստացված հրավերները, Հայաստանի Հանրապետության գոյության ամենաբարդ շրջանում Անդրանիկը լքում է երկիրը: Կարելի է ենթադրել, որ Հայաստանում ու նրա սահմաններից դուրս գտնվող որոշ ուժեր, իմանալով Անդրանիկի տաքարյուն բնավորությունը, հրահրում էին նրան ՀՀ կառավարության դեմ: Հավանաբար դրանով են բացատրվում 1919 թ. ապրիլյան դեպքերը:

Ցավալին այն է, որ հայ ժողովրդի պաշտելի ու սիրելի Անդրանիկը, համաձայնության չգալով ՀՀ կառավարության հետ, հեռացավ արտասահման: Ի տարբերություն նրա՝ գեներալ Թ. Նազարբեկյանը բազմաթիվ անհաջողություններից հետո էլ պահպանեց Հայկական կորպուսի մարտունակ միջուկը, մինչև վերջ մնաց անկախ Հայաստանում և շարունակեց հայոց զինուժի՝ բանակի կազմավորումը:

Ա-Դոյի հողվածը տպագրվում է ուղղագրական և կետադրական որոշ շտկումներով՝ ոճի պահպանմամբ: Մեր միջամտությունները կատարվել են ուղղանկյուն փակագծերով: Շղատառ ծանոթագրությունները Հ. Տեր-Մարտիրոսյանին են:

Պատրաստեցին՝  
*պարս. գիր թեկնածու Ռուբեն Հ. Գասպարյանը*  
*պարս. գիր. դոկտոր Ռուբեն Օ. Սահակյանը*

A-Do

## THE INEVITABLE

Andranik Ozanyan and Tovmas Nazarbekyan: comparisons

Prepared by  
*Ruben G. Gasparyan and Ruben O. Sahakyan*

**Key words** – A-Do, Lieutenant-General Tovmas Nazarbekyan, Major-General Andranik Ozanyan, Lieutenant-General Evgeny Vishinsky, Djevdet Bey, Colonel Al. Bey Mamikonyan.

A-До

## НЕИЗБЕЖНОЕ

Андраник Озаян и Товмас Назарбекян: сопоставления

подготовили  
*Рубен Г. Гаспарян и Рубен О. Саакян*

**Ключевые слова** – А-До, генерал-лейтенант Товмас Назарбекян, генерал-майор Андраник Озаян, генерал-лейтенант Евгений Вышинский, Джевдет-бей, полковник Ал. бей Мамиконян.

Խոշոր իրադարձությունների ընթացքում հաճախ գործող անձնավորությունների մեջ ծագում են վեճեր, որոնք ըստ երևույթին փոքր ու նույնիսկ անձնական բնույթ կրող, այնուամենայնիվ դրանք գալիս են բնութագրելու վիճող անձնավորությունները և լուսաբանելու առիթ հանդիսացող իրադարձությունները, որով և նման վեճերը ստանում են արժեքավորում:

Այդպիսի մի վեճ գործող երկու անձնավորությունների մեջ ծագեց կարճատև գոյություն ունեցող հանրապետական Հայաստանի այն օրերին, երբ 1918-1919 թվերին տաճկական բանակը մահմեդական հորդաներն առաջը ձգած խուժեց Կովկասի սահմաններից ներս, գրավեց Սարիղամիշը<sup>2</sup>, Կարսը<sup>3</sup> Ալեքսանդրապոլը<sup>4</sup>, առաջացավ մեկ թևով դեպի Երևան-Նախիջևան, մյուս թևով դեպի Ղարաքիլիսա<sup>5</sup>, ուր և տաճկական բանակը խաղաղ հայ ժողովրդի նկատմամբ գործադրեց բոլոր այն բարբարոսությունները, որոնք կիրառվել էին նրա արյունոտ գոյության տարեգրությունների ընթացքում:

Վերը հիշած անձնավորություններից մեկը Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկյանն<sup>6</sup> էր, իսկ մյուսը տաճկական բռնությունների դեմ պայքարող, հայդուկային կոիվներում անուն վաստակած Անդրանիկը<sup>7</sup>:

Բայց նախ մի պահ կանգ առնենք այդ երկու անձնավորությունների վրա որպես այդպիսիների:

Անդրանիկի վրա երկար կանգ չենք առնի. Անդրանիկի անունը հանրահռչակ է, հայդուկային գործիչներից և ոչ մեկը այնպիսի անուն ու հռչակ չի ստացել, ինչպես Անդրանիկը:

Սակայն հետաքրքիր է, թե ով էր Նազարբեկյանը և նրա որպիսի տվյալների հիման վրա նա առաջ քաշվեց մինչև Հայկական կորպուսի հրամանատարության կոչումը:

Թունաս<sup>8</sup> Հովհաննեսի Նազարբեկյանը ծնվել է 1855 թվին Թիֆլիսի նահանգում: Ավարտել է Մոսկվայի 2-րդ զինվորական գիմնազիան և 3-րդ Ալեքսանդրովյան զինվորական դպրոցը: 1877 թվին որպես երիտասարդ սպա մասնակցել է

2 Օսմանյան գործը Սարիղամիշը գրավել է 1918 թ. ապրիլի 10-ին:  
3 Կարսը հակառակորդին հանձնվել է 1918 թ. ապրիլի 10-12-ը:  
4 Օսմանյան գործը Ալեքսանդրապոլը (Լենինական, Կումայրի, Գյումրի) գրավել է 1918 թ. մայիսի 15-ին:  
5 Թշնամին Ղարաքիլիսան (Կիրովական, Վանաձոր) գրավել է 1918 թ. մայիսի 28-ին:  
6 **Թովմաս Նազարբեկյան** (1855-1931), ռազմական գործիչ, ռուսական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ: Ավելի մանրամասն տե՛ս **Sahakyan R. O.**, Lieutenant- General Tovmas Nazarbekyan's role in military forces (1914-1916). Dedicated to the 160-th anniversary of Tovmas Nazarbekyan, <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/270.pdf>: Ռուսաստանի պատմաբան Կ. Ա. Ջալեկին, որը կազմել է Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած գեներալների կենսագրությունները, հարկ է համարել նշել, որ գեներալ Թ. Նազարբեկյանը անցել է ռուսական բանակի համար շարային ծառայությամբ նախատեսված բոլոր պաշտոնները, ինչը, մեր կարծիքով, հազվադեպ երևույթ է. տե՛ս **Залесский К. А.**, Кто был кто в Первой мировой войне, М., 2003, с. 434. Սույն հեղինակն ամբաստանում է գեներալին, թե նա իբր թուրքական գործի 1915 թ. հուլիսյան հարձակման ժամանակ գործել է չափազանց դանդաղ, չի աջակցել Կովկասյան IV բանակային կորպուսին, որի պատճառով հակառակորդի խմբավորումն ամբողջությամբ չի ոչնչացվել. տե՛ս նույն տեղում: Սակայն միաժամանակ նշում է, որ գեներալը պարզևստրվել է Գեորգիևյան խաչի IV աստիճանով, չհավելելով, թե որ ռազմական գործողության կամ ճակատամարտի համար է ստացել սույն շքանշանը: Իրականում հեղինակի կողմից նշված «դանդաղաշարժությունը» որևէ հիմք չունի: Նման գնահատականը չի համապատասխանում իրականությանը: Կ. Ջալեկու դիտողությունը վերաբերում է Վանի 1915 թ. հուլիսյան նահանջին, որն իրականացվեց միտումնավոր և մեղավոր համարվեց Թ. Նազարբեկյանը, որի հետ նա որևէ կապ չունե: Հիմնավորված ենք համարում, որ նահանջի հրամանը տրվել է ռուսական բարձրագույն հրամանատարության կողմից, ինչի արդյունքը եղավ Վասպուրականի հայկական իշխանության վերացումը և հայ ու ասորի բնակչության գաղթը Արևելյան Հայաստան:  
7 **Անդրանիկ Օզանյան** (1865-1927 թթ.), հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր, գործիչ, ռուսական բանակի գեներալ-մայոր:  
8 Թովմաս:

ռուս-տաճկական պատերազմին<sup>9</sup> ու Արդահանի գրոհին<sup>10</sup>: 1904 թվին իբրև գնդապետ մասնակցել է ռուս-յապոնական [ճապոնական] պատերազմին, որի ընթացքում պարգևատրվել է ոսկե սրով: 1907 թվին համաձայն իր դիմումի թողնում է զինվորական ծառայությունը<sup>11</sup>:

1914 թվի համաշխարհային պատերազմին կանչվում է բանակ<sup>12</sup>, կարգվում է բրիգադայի [բրիգադի] հրամանատար և ուղարկվում Պարսկաստան, ուր 1915 թվին ղեկավարում է Դիլմանի ձակատամարտը<sup>13</sup>: 1916 թվին կարգվում է դիվիզիայի հրամանատար, իսկ 1917 թվի վերջերում հրավիրվում է որպես Հայկական կորպուսի հրամանատար<sup>14</sup>:

Որպես կարող զորավար գեներալ Նազարբեկյանը անուն վաստակեց 1915 թվի ապրիլին Սալմաստի կենտրոնավայր Դիլմանի մոտ տեղի ունեցած ձակատամարտի հաղթանակով, որի վրա արժե մի փոքր կանգ առնել:

1915 թվի ապրիլ ամսի կեսերին տաճկական բանակի աջ թևը Բաշկալեից առաջ շարժվելով կոխեց պարսկական սահմանը և դուրս եկավ Սալմաստի շրջանը:

Սա տաճկական կանոնավոր զորամաս էր, հագեցված համիդեական կոչվող քրդական գնդերով, որին, ըստ երևույթին, խնդիր էր դրված առաջանալ մինչև ռուս-պարսկական սահմանը, թերևս էլ ավելի հեռու<sup>15</sup>:

Միջանկյալ պիտի ասել, որ դեռևս 1914 թվի դեկտեմբերի կեսերին, երբ տաճկական բանակը մեծ ծավալով Օլթի-Արդահան-Սարիղամիշ ուղղությամբ խուժեց ռուսական սահմանից ներս, սարսափի բերելով հայ ժողովրդին և մեկեն տաճկական բանակը ջարդվեց և փախուստի դիմեց՝ կորցնելով բազմահազար սպանվածներ ու գերիներ<sup>16</sup>, նման գործողություն թեև փոքր չափով տեղի ունեցավ նաև պարսիկ-տաճկական ձակատում, որի հետևանքով տեղից շարժվեց Սալմաստի և Խոյի հայ ժողովուրդը:

9 Նկատի ունի 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:

10 Արդահանը թունները գրավել են 1877 թ. մայիսի 5-ին:

11 Թ. Նազարբեկյանն իր զորացրվելու պատճառը բացատրում էր այն հանգամանքով, որ բարձրագույն հրամանատարությունը հրաժարվել էր նրան շնորհել գեներալ-մայորի կոչումը՝ պատճառաբանելով, որ ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում այդ կոչման լիմիտը սպառվել է: Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 1 շքջ.-2:

12 Թ. Նազարբեկյանը, համաձայն իր դիմումի, կամավոր է անցնում ծառայության. տես ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 7, թ. 2րջ.-8:

13 Դիլմանի ձակատամարտի մասին ավելի մանրամասն տես Հայոց պատմություն /Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., հատ. 3, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.): Գիրք II (1901-1918 թթ.), հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին): Խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշ., Եր., 2015, էջ 463-464, **Սահակեան Ռ.**, Զորավար Թովմաս Նազարբեկեանի Անտիպ Յուշերը Ա. Համաշխարհային Պատերազմի Ռուս-թրքական Ռազմաձակատի Մարտական Գործողությունների մասին (1914 Յուլիս-1916 Ապրիլ), «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Պէլյուրթ, 2016, հատ. Լ, էջ 217-256, տես նաև **Саакян Р.**, Роль генерала Т. Назарбека в битве под Дильманом (По архивным материалам), «Историко-филологический журнал», 2016, N 2, с. 227-247.

14 Որպես զորավար Թ. Նազարբեկյանին բարձր է գնահատել նաև թշնամին՝ Գյազին Կարաբեքիր փաշան: Նա Ատրպատականի հոգևոր առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Թանգյանի հետ ունեցած գրույցի ժամանակ հետևյալն է ասել. «Հայաստան ունի երեք մարդ՝ Նազարբեկեան, Արամ (Մանուկյան - Ռ.Գ., Ռ.Ս.) և Ալեքսանդր Խատիսեան: Եթե՛ հայերը իմաստություն ունենային այս երեքին ազատ թողնելու իրենց գործերը վարելու համար, անկասկած է, որ իրենց բախտը տարբեր պիտի ըլլար», տես **Աթորունի Վահէ**, Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայությունը: Շատախ, Եր., 2002, էջ 380:

15 Ա-Դոն հավանաբար տեղյակ չէր, որ օսմանյան ուժերն իրենց առջև նպատակ էին դրել Դիլմանի մոտ ռուսներին պարտության մատնելուց հետո շարժվել Նախիջևան և Գանձակ, որտեղ նրանք, համալրելով իրենց շարքերը, ուղղվելու էին Հյուսիսային Կովկաս՝ նպատակ ունենալով երկրամասն անջատել Ռուսաստանից: Դիլմանի մոտ տարած հաղթանակի համար Թ. Նազարբեկյանը պարգևատրվում է սպայական Ս. Գեորգիի IV աստիճանի խաչով և ֆրանսիական կառավարության «Médaille militaire» մեդալով:

16 Նկատի ունի Սարիղամիշի ձակատամարտը, որի ժամանակ Կովկասյան բանակը ծանր պարտության մատնեց օսմանյան III բանակին: Թշնամին 90 հազար զինծառայողից կորցրեց 78 հազարը, իսկ ռուսները՝ 60 հազարից 20 հազարը:

Առաջին անհաջող փորձը տաճիկ հրամանատարության համար դաս չհանդիսացավ և այս առաջխաղացումը առաջինի կրկնությունն էր՝ խրախուսված այն բանով, որ ռուսական բանակը դեկտեմբերյան մեծ բախումներից հետո ժամանակավոր դադար էր առել:

Ռուսական բանակը բնած չէր, երբ տաճկական բանակի աջ թևը հայտնվեց Սալմաստում, ռուսական բանակն արթուն հետևում էր թշնամու շարժումներին և նույնիսկ պատրաստվում էր ունենալու հանդիպում նրա հետ<sup>17</sup>:

Սալմաստը հարթավայր է, ունենալով շրջապատ հարավային, արևմտյան ու հյուսիսային կողմերից բլուրներ ու բարձրունքներ, իսկ արևելյան կողմից Ուրմիայի լճի ափերը:

Սալմաստի վարչական կենտրոնը՝ պարսպապատ Դիլմանը կարելի է ասել գրաված ունի գավառի հարթավայրի կենտրոնը:

Բուն Դիլմանից հյուսիս տարածվում է խոտավետ դաշտ, որի սահմանների վրա ընկած են Այրիվան, Սադադյան և Մուխանջուզ գյուղերը:

Եվ ահա երկու թշնամի բանակները, ապրիլի 15-ին նպատակակետ ունենալով Դիլմանը, դրանից հյուսիս ընկած բլուրների շրջանում հանդիպում են իրար և սկսվում են ուժեղ բախումներ:

Այս այն միջոցին էր, երբ Վասպուրականի բոլոր շրջաններում սկսված հայաջինջ զանգվածային ջարդերը շարունակվում էին, Վանը և Շատախը փարած գեներալներն տանում էին օրհասական պայքար, դիմադրում էին ու կանգնեցնում տաճկական զորքերի, քյուրդ ու թյուրք հորդանների գրոհներն ու խուժումները, ի հայտ բերելով հերոսական ակտեր:

Դիլմանից դեպի հյուսիս ընկած բլուրների շրջանում սկսված երկու բանակների բախումները ապրիլի 16-17-ին կատաղի բնույթ կրեցին<sup>18</sup> և հետ ու առաջ, աջ ու ձախ տեղաշարժեր կատարելով ու հետզհետե բլուրներից իջնելով Դիլմանից ոչ շատ հեռու, խոտավետ դաշտի վրա տեղի ունեցավ վճռական ճակատամարտը, որի ժամանակ տաճկական բանակը սուկալի ջարդ կրեց ու դիմեց անկանոն փախուստի՝ ձակատամարտի տեղում թողնելով բազմաթիվ դիակներ<sup>19</sup>:

Տաճկական պարտված բանակը ղեկավարում էր Խալիլ փաշան [բեյը], իսկ ռուսական բանակը՝ գեներալ Նազարբեկյանը:

Այս ճակատամարտը հանդիսացավ գեներալ Նազարբեկյանի և Անդրանիկի միմյանց ճանաչման և մոտեցման լավ առիթ:

Պարտված Խալիլ փաշան ու նրա պարտված և ջախջախված բանակը գնացին՝ ամոթալի պարտության թույնը թափելու հայ ժողովրդի գլխին և անմեղ մարդկանց

17 Թ. Նազարբեկյանի հուշերից հետևում է, որ Կովկասյան բանակի հրամանատարությունը միայն վերջին պահին է տեղեկացել թուրքական զորաշաժի մասին, ուստի շտապ ուղարկել է Թ. Նազարբեկյանին՝ Դիլմանի շրջանի պաշտպանությունը կազմակերպելու համար: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 25 շրջ.-26:

18 Գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերից հետևում է, որ Խալիլ բեյը մեկ օրով ուշացրեց գլխավոր հարձակումը: Իրավիճակը գրեթե անհույս էր, քանի որ ռուսները չունեին անհրաժեշտ քանակությամբ զորք, որպեսզի դիմագրավեին թշնամուն: Գեներալի խոստովանությամբ՝ իրավիճակը փրկեց Հայկական 1 կամավորական խմբի վաշտը Սմբատ Բորոյանի գլխավորությամբ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 27-28: Այդ ստորաբաժանումը Անդրանիկի կողմից ուղարկվել էր հետախուզություն կատարելու համար: Հիմնական մարտերը տեղի են ունեցել ապրիլի 18-ին:

19 Համաձայն Թ. Նազարբեկյանի հուշերի՝ հակառակորդի կողմում կազմել 2 հազար սպանված, իսկ ռուսներինը՝ 600 սպանված և 800 վիրավոր, տե՛ս ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 42 և շրջ.: Անդրանիկի հրամանատարության հերթը գործող 1 կամավորական խմբի մարտիկներից գոհվել էր 21 և վիրավորվել 55 հոգի, տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 3, թ. 30: Ինչպես նշում է Ա. Հարությունյանը. «Դիլմանի ձակատամարտի մասին Թիֆլիսում, փոխարքայության արխիվում պահվող ռազմական գործողությունների օրագրության մատյանում, ասված է հետևյալը՝ «ապրիլի 1-20-ը ընկած ժամանակաշրջանի ամենանշանավոր իրադարձությունը կարելի է համարել Իրանի տերիտորիայում, Դիլմանի շրջանում թուրքերին հասցրած պարտությունը»: Տե՛ս Հարությունյան Ա. Հ., Կովկասյան ռազմաճակատի գործողությունները և Վանի ինքնապաշտպանությունը 1915 թվականին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1977, N 3, էջ 109:

արյունով սփռվելու իրենց զագիր թույնը<sup>20</sup>:

Դեկտեմբերի կեսերին տեղի ունեցած երկու բանակների բախումների և կատարած շարժումների հետևանքով Սալմաստում շատ քիչ ժողովուրդ էր մնացել և այն էլ մեծ անսարք կանայք, երեխաներ ու ծերունիներ, դրանցից մոտ 300 հոգի մի կերպ կարողացել էին իրենց գոյությունը պահպանել Հաֆթվան գյուղում և ահա Խալիլ փաշայի պարտված զորքերը հասնելով այդ գյուղը, այդտեղ եղած հիշյալ ժողովրդին քշում են Մուխսի<sup>21</sup> Ավետի արտի մեջ, անխնա կոտորում են մինչև վերջին մարդը ու դիակները քարշ տալով ու կուտակելով արտի պատի տակ՝ քանդում են պատը և քար ու հողով ծածկում դիակները:

Նման զարհուրանք տեղի է ունենում Ադրակի Հերիսան գյուղում, որը գտնվում էր Բաշկալեի ճանապարհի վրա:

Այդ գյուղում ունեռ երկու եղբայրներ՝ Ասատուր ու Մկրտիչ Բաբայանները մինչև այդ կարողանում են իրենց գոյությունը պահել շնորհիվ իրենց առատ սեղանի, որն ամեն անգամ բացում էր անցուդարձող պաշտոնյաների, մանավանդ Բաշկալեի նախկին մութասարիֆ<sup>22</sup>, իսկ ներկայումս Վանի կուսակալ Ջևդեթ բեյի առաջ: Այդ գյուղում կենդանի մնացած մոտավորապես 270 կանայք, երեխաներ ու ծերունիներ համարելով այդ տունը ապահով, քաշվում են այդ տան գոմի, մարագի և այլ ծածկերի տակ: Եվ ահա ջարդված բանակի թափոթփուկները հասնելով Հերիսան, զարկվում են ոչ միայն այդ երկու եղբայրները, այլև նրանց տանը եղած 270 կանայք, երեխաներ ու ծերունիներ: Եվ ապա հավաքում են դիակները ու լցնում այդ տան ցորենի, գարու հորերի մեջ, շատերին անգամ կենդանի-կենդանի ու վրաները լցնում են հող ու քարեր:

Այսպիսով պարտված Խալիլ փաշան գնաց ու կոփեց տաճիկ պետական բարբարոսությունների երկու նոր կոթողներ:

Իսկ ռուսական քաջարի բանակի հրամանատար գեներալ Նազարբեկյանը, որպես հաղթանակը գլխավորող հրավիրվեց ու ստանձնեց Հայկական կորպուսի հրամանատարության պաշտոնը:

Պայմանները փոխվեցին, ռուսական զորքերը լքեցին ձակատները, լքեցին գրաված տեղերը Տրապիզոնից մինչև պարսկական հեռավոր սահմանները՝ ընդգրկած ունենալով Էրզրումի [Կարին], Վանի և Բիթլիսի [Բաղեշ] վիլայեթների [նահանգների] խոշորագույն մասերը և Պարսկաստանի որոշ մասը, և երեսները դարձրին դեպի տուն: Եվ այդ ահագին ձակատի երկարությամբ դեմ առ դեմ կանգնեցին տաճկական պետությունն ու բանակը և հայ ժողովուրդն իր Ազգային խորհուրդներով ու ռուսական կազմալուծված բանակից գատված հայ զինվորներով ու կամավորական գնդերով:

Այո, պայմանները փոխվեցին, բայց չփոխվեցին դերերը, չփոխվեցին մանավանդ իրերի ըմբռնումները:

Դիլմանի ձակատամարտում հռչակ ստացած գեներալ Նազարբեկյանը ստանձնեց հայ ժողովրդի նոր կազմակերպվող զորքի հրամանատարի պաշտոնը, իսկ նույն ձակատամարտի [ռազմաձակատի] մեկ թևը դեկավարող Անդրանիկը ստանձնեց հայ նոր զորքի մեկ թևի դեկավարությունը:

Այսպիսով Դիլմանի ձակատամարտում զինակցած, միմյանց ճանաչած ու միևնույն ենթակայությամբ գեներալ Նազարբեկյանը և Անդրանիկը եկան, տեղեր գրավեցին նոր կազմակերպվող հայ զորքերի պոստերում:

20 Ռուսական հրամանատարությունը սկսում է Խալիլ բեյի 3-րդ դիվիզիայի հետապնդումը: Սակայն, ինչպես վկայում է գեներալ Թ. Նազարբեկյանը, երբ Անդրանիկի հրամանատարությամբ գործող հետախույզների հաջողվում է պարզել թշնամու փախուստի ուղղությունը, ռուսական հրամանատարությունը ավելի շատ վստահում է սեփական հետախույզությամբ, որի արդյունքում Խալիլը բեյը բարեհաջող կերպով կարողանում է Դիլմանի ձակատամարտում ջախջախված ուժերը փրկել շրջապատումից և վերջնական ոչնչացումից:

21 Մահտեսի՝ Երուսաղեմ ուխտի գնացած:

22 Գավառակալետ:

Երկու համադրություններ, տեսեք.

Տաճկական բանակը քանակով գերազանցված, պատերազմներում փորձ ձեռք բերած ու նորագույն ռազմագրահով [զենքով] զինված:

Իսկ հայկական բանակը փոքր, նորածին, պատերազմներում չեղած և անփորձ ու ռազմագրահով չապահովված:

Տաճկական պետությունն իր գործողությունների, ձեռնարկումների մեջ ինքնուրույն և իր բախտը իր ձեռքում ամուր պահած:

Իսկ հայկական պետությունը դեռևս նոր սկսված. երերուն, ձեռքն ու ոտքը կաշկանդված և իր բախտը հանգուցված ոչ բարեկամ, անգամ ոչ շիտակ, ոչ անկեղծ հարևանների կծիկում:

Ավելին.

Տաճիկ պետական ղեկավարները՝ դիվանագետ, փորձառու, հեռատես, խորամանկ, արտաքինով ջենտլմեն, ներքուստ ասիացի, կեղծավոր, շողոքորոտ, ծածկամիտ, նենգ և շարունակ աչքերը հառած կշեռքի նժարին:

Իսկ հայ պետական ղեկավարները՝ անփորձ, անհեռատես, անգամ պարզամիտ և անկարող թափանցելու իրերի, իրադարձությունների ներսը:

Եվ ահա այն անհամաչափ պայմանները, որոնք եկան հայ ժողովրդի արդար պայքարի ձախողումը դարձնելու անխուսափելի և անխուսափելի կատարվեց:

Անխուսափելին կատարվեց՝ տաճիկները հետզհետե եկան, գրավեցին Երզնկան, Էրզրումը<sup>23</sup>, Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրապոլը, Արարատյան բարեբեր դաշտը, Ղարաքիլիսան և այլն:

Այդ նվաճումների ընթացքում տեղի ունեցան դիմադրություններ, պայքար, հերոսական գործեր և նույնիսկ հաղթություններ, թշնամուն ջարդելու և քշելու ակտեր, բայց և այնպես տաճիկները եկան ու եկան հրով և սրով:

1918 թվի հունիսի սկզբի օրերին, տեղի է ունեցել Ղարաքիլիսայում հայ գործերի երկու օր տևող հարձակումները, հաղթությունները և ապա ծանր պարտությունը:

Հայկական կորպուսի շտաբը եկել, կանգ է առել Դիլիջանում: Այդտեղ թափվում, գալիս են հայ գնդապետներ, վաշտապետներ և սպաներ, իսկ Անդրանիկն իր գորամասով կանգ է առնում Դսեղում:

Ստացվում է Թիֆլիսից խայտառակ հաշտության մանրամասնությունները<sup>24</sup>: Լքումն ու հուսահատությունը համակել է բոլորին: Յուրաքանչյուրը փնտրում է պարտության պատճառը, խայտառակ հաշտության հանցավորներին, այս վարակել է բոլորին, նաև ղեկավարներին ու բոլորի հայացքը ուղղված է դեպի գործի հրամանատարը՝ շտաբը:

Եվ ահա այս պայմաններում գեներալ Նազարբեկյանի ձեռքն են տալիս Անդրանիկի հետևյալ հեռագիրը.

–Դո՛ւք, պարոն Նազարբեկյան, ոչ անհատապես, այլ որպես ընդհանուր հրամանատար, Ձեր հոժար կամքով ստրկության շղթաներ անցուցիք Ձեր վիզը և Դուք կլինեք պատասխանատու գալիք սերունդներու առաջ, որպես այդ շղթաների

23 Էրզրումը գրավվել է 1918 թ. փետրվարի 27-ի երեկոյան: Հակառակորդի հարձակմանը նպաստում են քաղաքում մնացած թուրքերը, որոնք թիկունքից կրակ են բացում հայ զինծառայողների վրա: Նշենք, որ ռուսների կողմից Էրզրումը գրավելուց հետո քաղաքում մնացել էր 28 հազարից ավելի թուրք, որոնցից 13 հազարից ավելին՝ տղամարդ. տե՛ս **Սահակյան Ռուբեն**, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս–1917 թ. փետրվար), Եր., 2015, էջ 298: Նրանցում զգալի թիվ էին կազմում օսմանյան բանակի զինծառայողները, որոնք ծալված մնացել էին Էրզրումում:

24 Նկատի ունի 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված հաշտության պայմանագիրը: Ինչպես նշում է ակադեմիկոս Ա. Մելքոնյանը, Բաթումի պայմանագրում կար հավելում, որով «Հայաստանի կառավարությունը պարտավորվում է իր տարածքում թույլ չտալ հակաթուրքական... խմբերի գործունեությունը: Դրա տակ թուրքերը նկատի ունենին Անդրանիկի ջոկատը»: Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013, էջ 437:



կոփողը...<sup>25</sup>:

-Ես այս պայմաններում չեմ կարող մնալ և վաղը մեկնում եմ գորամասովս այնտեղ, ուր կարելի կլինի հնչեցնել մեր ցեղի ձայնը և պայքարել նրա արժանապատվության ու ազատության համար:

Անդրանիկի այս հեռագրին գեներալ Նազարբեկյանը հունիսի 4-ին տվեց հետևյալ պատասխանը.

-Ստանալով Ձեր հեռագիրը՝ հայտնում եմ, որ նա ինձ չի վիրավորում, որովհետև անհաջողության գլխավոր հանցավորներից մեկը ես համարում Ձեզ և Ձեր գորամասը: Ունենալով այնպիսի մեծ ուժ, ինչպիսին Ձերն է, միամիտ պատճառաբանություն է պաշարը, կորպուսը շտաբի հետ կապ չունենալը, որով Ջալալօղլիից նահանջեցիք, ունենալով Ձեր դիմաց տաճկական մի գումարտակ հետևակ զորք ու որով մերկացրիք Ղարաբիլիսայի գորամասի շատ կարևոր թևը: Նման երևույթ տեղի ունեցավ նաև Էրզրումի և Սարիղամիշի տակ: Նախքան այդպես անթույլատրելի կերպով մեղադրելը Ձեր իշխանավորին, որի անձնավորությունը և հայացքները անցյալի փորձերից շատ լավ գիտեք, պետք է որոնել ամոթալի հաշտության իսկական հանցավորներին ու պատճառները: Պատվավոր հաշտություն այն միջոցին, երբ մեր ժողովուրդը ենթարկվում էր բռնության ու կողոպուտի և մարտական հրամաններն ինձ ենթարկվող հրամանատարների կողմից չէին կատարվում, մենք ստանալ չէին[ք] կարող: Պատմությունը կքննի ու կդադապարտի իսկական հանցավորներին, որոնց շնորհիվ Հայոց ազգային խորհուրդը ստիպված եղավ ընդունել ստորացուցիչ հաշտությունը:

Եվ այս պատասխանից մեկ օր անց գեներալ Նազարբեկյանը Արամին<sup>26</sup> գրավոր հայտնեց հետևյալը:

-Նկատի առնելով այն, որ Անդրանիկը քանիցս իմ կողմից դրված մարտական հրամանները չի կատարում և հակառակ իմ հրամանի՝ չսպասելով մինչև հերթափոխի Դիլիջանից տեղ հասնելը, հունիսի 5-ին ինքնագլուխ հեռացել է, ես գտա, որ ինչպես անձամբ ինքը՝ Անդրանիկը, այնպես էլ նրա ամբողջ գորամասը ոչ միայն ընդհանուր գործին օգուտ չեն բերում, այլ ընդհակառակը մշտապես բնակչությանը կողոպտելով ու մարտական հրամանները չկատարելով վնասում են գործին, ուսի ես հրաման տվի ինձ վստահված կորպուսի կազմից բոլորովին հանել Անդրանիկի ջոկատը, որի մասին խնդրում եմ Ձեզ հաղորդել Հայաստանի պաշտպանության խորհրդին:

Կորպուսի հրամանատար Նազարբեկյան

Մի պահ կանգնենք Անդրանիկի և Նազարբեկյանի մեջ փոխանակած գրությունների վրա.

-Դուք կլինեք պատասխանատու գալիք սերունդների առաջ,- հեռագրում է Անդրանիկը Նազարբեկյանին:

-Պատմությունը կքննի ու կդատապարտի հանցավորներին,- պատասխանում է Նազարբեկյանը:

Այսպիսով Անդրանիկը և Նազարբեկյանը, փոխադարձաբար միմյանց մեղադրելով, երկուսն էլ դիմում են պատմության դատաստանին:

Հարց. հայ ժողովրդի կրած նորագույն այս սոսկալի ծախսողումների պատասխանատվությունն ամբողջովին վերցրած, կարելի է արդյո՞ք վերագրել Անդրանիկին կամ գեներալ Նազարբեկյանին<sup>27</sup>:

Իհարկե ո՛չ, եթե կա հանցավոր, որի ճակատին պետք է դրոշմել մեկ ամբողջ ժողովրդի, հայ ժողովրդի անեծքը, նզովքը, արյունով հագեցված դրոշմը, դա

<sup>25</sup> Կախման կետերը հեղինակինն են:

<sup>26</sup> Արամ Մանուկյան (Սարգիս Հովհաննիսյան, 1879-1919), հայ ազգային և պետական ականավոր գործիչ, ՀՅԴ անդամ, ՀՀ ՆԳ նախարար:

<sup>27</sup> Այս մասին ավելի մանրամասն տես «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք II, էջ 651-653:

աշխարհի բախտը տնօրինող, մարդկության դժբախտության մեջ իր շահը, իր երջանկությունը փնտրող, հավելյալ արյուն փնտրող վամպիր դիպլոմատիան<sup>28</sup> է և դրան հավատացող ու դրա հույսերով ապրողները:

Սակայն խնդրի այս ընդհանուր հարցադրումից անկախ, մենք չենք կարող միանգամայն անտեսել այն ուղին, որ ընտրել էին Անդրանիկը և գեներալ Նազարբեկյանը իրենց գործունեության ընթացքում և չէինք կարող չշոշափել այդ երկու անձնավորությունների անհատական մոտեցումը դեպի ընդհանուր գործը:

2<sup>Ը</sup> որ անհատը բոլորովին ազատ չէ իր անձնական մտորումներից ու ձգտումներից և որ նրա մեջ գերակշռող այս կամ այն տարրերը անդրադառնում են գործի վրա դրական կամ բացասական իմաստով:

Նախ մեկ հարց՝ որտեղից՞ են ծագում հակասությունները այդ երկու անձնավորությունների մեջ կամ ավելի ճիշտ՝ ինչո՞վ բացատրել միմյանց չհասկանալը, միմյանց չըմբռնելը այդ երկու անձնավորությունների մոտ:

Նազարբեկյանը զինվորական դպրոց անցած, կարգապահությանը վարժված մարդ, իսկ Անդրանիկը՝ հայդուկային, պարտիզանական հեղափոխական:

Նազարբեկյանը դաստիարակվել է բանակում, նա մասնակցել ու ղեկավարել է] գորագույնը ու ձակատամարտեր և ունի մեկ ըմբռնում՝ անխախտելի հրաման, կուռ հնազանդություն և առաջ ու առաջ, եթե այդ է հրամանը:

Անդրանիկը անհատ հեղափոխական է՝ գլխից ձեռք վերցրած, մի քանի անձնվեր երիտասարդներ ետևը ձգած, մեկ օր այստեղ է, մեկ օր լեռան կատարին, երկրորդ օր դարան մտած մեկ չարագործ պաշտոնյայի սպասելիս, մեկ օր հարձակվում է պետական փոստի վրա կամ կռվի բռնվում իրեն հետապնդող ոստիկանների ու զինվորների հետ և ամեն անգամ էլ հարձակվում, զարկում, զարկվում է և փախչում ու անհետանում է, հրամայողն էլ և փախչելու նշան տվողն էլ ինքն է:

Ահա, թե ինչու գեներալ Նազարբեկյանի և Անդրանիկի մեջ բացակայում է միմյանց ըմբռնումը և կախվածությունը:

–Ես այս պայմաններում չեմ կարող մնալ և վաղը մեկնում եմ գորամասով այնտեղ, ուր կարելի կլինի հնչեցնել մեր ցեղի ձայնը և պայքարել նրա արժանապատվության համար<sup>29</sup>:

Այս խոսքերով էր վերջացրել Անդրանիկը Նազարբեկյանին ուղղած իր հեռագիրը և հունիսի 5-ին ճանապարհ է ընկնում:

Կտրելով Սենյոնովկայի լեռնանցքը, Ելենովկան<sup>30</sup>, Նոր Բայազետը<sup>31</sup> և Դարպալգյազի<sup>32</sup> լեռները, հունիսի 20-ին Անդրանիկը հասնում է Նախիջևան:

Անդրանիկի հետ շարժվում է 4000-ից<sup>33</sup> ոչ պակաս զինվորական ու թ թնդանոթներով, գնդացիներով և այլն, իսկ գորքի ետևից շարժվում է մեկ անծայր շղթա

28 Դիվանագիտություն:

29 Գեներալ Թ. Նազարբեկյանի հուշերում պահպանվել են ռուսական սահմանապահ ստորաբաժանման հրամանատար գնդապետ Ուշակովի կողմից հայ կամավորական խմբերի հրամանատարներին, այդ թվում Անդրանիկին տրված գնահատականները: Կարելի է ենթադրել, որ Թ. Նազարբեկյանը, վկայակոչելով ռուս զինվորականին, խուսափել է ուղղակի գնահատականներ տալուց, սակայն ելնելով այն հանգամանքից, որ հիշատակում է Ուշակովին, կարելի է ենթադրել, որ ինքն էլ որոշ չափով համաձայն է: Անդրանիկին գնդապետը հետևյալ կերպ է բնութագրել. «Անդրանիկ: Իր մեծամտությամբ բոլորի վրա վատ տպավորություն էր թողնում: Զորադասավորման հետ հաշվի չէր նստում, հրամանները չէր կատարում: ...Ընդհանրապես զգացվում էր որ նա ի գորու չէ ղեկավարել մեծ ջոկատ: ...Քեռիին, Համազասպին և Դրոյին չի կարելի կշտանքել անկարգապահության համար»: Տեն ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 3, թ. 12-13 շրջ.: Ռազմական պատմաբան Աշոտ Հարությունյանի գնահատմամբ, Անդրանիկը տարարյուն և քմահաճ անձնավորություն էր, սակայն նրան հատուկ էր ուղղամտությունը և ազնվությունը: Տեն **Арутюнян А. О.**, Кавказский фронт 1914-1917 гг., Е., 1971, 314.

30 Այժմ՝ ք. Սևան:

31 Այժմ՝ ք. Գավառ:

32 Այժմ՝ Վայոց ձոր:

33 Անդրանիկի գորամասի թիվը մոտ 2 հազար էր. տե՛ս «Հայոց պատմություն», էջ 651:

10000ի<sup>34</sup> չափ գաղթականներով, որը գնալով մեծանում է:

Չափելով սարեր ու ձորեր, հարց է ծագում, թե ինչ՞ միջոցներով է սնվում այդ ահագին բազմությունը: Անդրանիկի անձնական օրագրողը պատմելով, թե ինչպես որոշ տեղերում ժողովուրդը հյուրասիրում էր ճաշով ու հաց էր բերում գորքին բաժանում, որոշ տեղերում էլ պահանջում, վերցնում էին իրենք՝ գորքն ու գաղթող մասան:

Բայց ինչպես էին վերցնում, գաղափար կազմելու համար բերում ենք Անդրանիկի օրագրողի հետևյալ հատվածը:

-Ղարանլուղի<sup>35</sup> տափարակը, որի վրա տեղավորվում է զորամասը, ծածկված է գետնախնձորի արտերով, որոնք մեր ու գաղթականների շնորհիվ մի քանի ժամից ոչնչացվում են:

Անդրանիկը թողնելով պարտված, ծվատված, մեկ բռի մեջ սղմված անհրապույր Հայաստանը, բռնեց անհայտ ճանապարհ, դեպի ըստ երևույթին Խոյ, Սալմաստ և միանալով Սալմաստում կանգ առած հայկական ուժերին ու տեղահանված ժողովրդին՝ կտրել Ուրմիան, Բակուրեն<sup>36</sup> ու ոտ դնել Բաղդատ, այնտեղ ուր կարելի կլիներ հնչեցնել մեր ցեղի ձայնը և պայքարել նրա արժանապատվության ու ազատության համար:

Եվ որտեղ՝ Բաղդատում՝ խելամիտ մարդ:

Այդ ծրագիրը գլխում, 4000 ուժեր և ավելի քան 10000 գաղթողներ ետևը ձգած, հունիսի 22-ին Անդրանիկը ոտ դրեց Պարսկաստանի հողի վրա, բռնելով Խոյ տանող ճանապարհը:

Տաճիկները իմանալով այդ, մեկ զորամաս դուրս են բերում այդ ուղղությամբ և Անդրանիկը մեկ օր անց դեռևս Խոյ չհասած հանդիպում է այդ զորամասին, ջարդում է նրան, գրավելով զենք և ռազմամթերք ու շարունակում է իր ճանապարհը<sup>37</sup>:

Սակայն թշնամու ավելի մեծ ուժերի Անդրանիկը հանդիպում է Խոյի մատույցներում, սկսվում է կատաղի կռիվ Խոյի պարիսպների տակ, խուճապի է մատնվում գաղթողների զանգվածը, հետ փախչում Ջուլֆա ու նրա ետևից գլուխ է դարձնում նաև Անդրանիկին իր պարտված գորքով:

Անդրանիկի նահանջը նրա օրագրողը հետևյալ կերպով է նկարագրում.

-Նահանջը կրում է քանու արագության բնույթ, ահագին տարածությունը հագարավոր գաղթականությունը և գորքը կտրում և անցնում է մեկ գիշերվա մեջ ու հունիսի 25-ի առավոտյան Անդրանիկն այդ ահագին բազմության հետ նորից ոտք է դնում ռուսական Ջուլֆան<sup>38</sup>:

Ահա այդպես է ավարտվում Անդրանիկի ձեռնարկած արշավը դեպի հեռավոր Բաղդատը:

Սակայն կարելի է Անդրանիկին վերագրել արդյո՞ք անձի պաշտամունքի որևէ տարր:

34 Անդրանիկի զորամասին հետևում էին շուրջ 20 հազար գաղթականներ, տես նույն տեղում:

35 Հայաբնակ գյուղ Նոր Բայազետի գավառում (ծնթ. Ա-Գոյի): Այժմ՝ Մարտունի:

36 Բակուրա:

37 1918 թ. մարտին Կ. Համբարձումյանի գլխավորությամբ Վանից Պարսկաստան են նահանջում զգալի թվով հայ և ասորի գաղթականներ, ինչպես նաև զորամասեր: Այստեղ հայկական ստորաբաժանումներն անցնում են ռուսական Ադրբեջանական հատուկ ջոկատի ենթակայության տակ: Վերջինիս հրամանատարությունը որոշում է անցնել հարձակման Խոյ-Ջուլֆա ուղղությամբ: Սկզբնապես հարձակումը բավականին արդյունավետ է լինում, սակայն օսմանյան հրամանատարությունը նրանց դեմ է կենտրոնացնում լրացուցիչ ուժեր, որոնց թվում էին 6-րդ դիվիզիան և 12 դիվիզիայի մի մասը: Հակառակորդը զինված էր ութ թնդանոթով և տասներկու գնդացիներով: Հուլիսի 5-ին թուրքերին հաջողվում է հարկադրել Ադրբեջանական հատուկ ջոկատի ուժերին նահանջել և սկսել հետապնդումը, սակայն թշնամին անսպասելիորեն դադարեցնում է հարձակումը և նահանջում: Հայկական 5-րդ գնդի պորուչիկ Տիգրան Ժամհարյանցի վկայությամբ՝ օսմանյան ուժերի նահանջի պատճառը Անդրանիկի զորամասի հարձակումն էր Խոյի և Դիլմանի ուղղությամբ: Տես **Սահակյան Բ. Օ.**, Վանի հայության 1918 թ. մարտյան նահանջը Պարսկաստան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, N 1-2, էջ 354:

38 Ջուլա:

Ո՛չ: Անդրանիկը հայտնաբերել է շատ ու շատ անգամ հերոսական ակտեր, պատմում են դեպքեր, երբ Անդրանիկը թշնամու գնդակների տարափի տակ սուրը մերկացրած ինքը առաջինն է նետվել թշնամու վրա, այսպիսի դեպքեր պատմում են ականատեսները Էրզրումը թողնելու ժամանակ, վերևը նկարագրված Խոյի շուրջը վարած գրոհների միջոցին:

1909 թվին Տաճկա-Հայաստան<sup>39</sup> ճանապարհորդելիս այցելելով Տարոնի երեք նշանավոր վանքերը՝ Ս. Հովհաննեսը թառած Մուշի դաշտի հյուսիսային լեռների բարձրունքում, Ս. Կարապետը նույն Մուշի դաշտի հյուսիսային լեռների բարձրունքում և Առաքելոց վանքը՝ բազմած Մուշ քաղաքի թիկունքում խոյացած բարձրունքի վրա, ամենից առավել իմ ուշարությունն իր վրա գրավեց վերջինը՝ Առաքելոց կամ Թարգմանչաց վանքը:

Նախ ինձ հետաքրքրեց այդ վանքի արևելյան պատի տակ մամուռով պատած խոշոր գերեզմանաքարերի շարքը, այդ քարերի տակ ամփոփված են մեր Ոսկե դարի թարգմանիչների և հետագա տարիների պատմագիրների՝ Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Ղազար Փարպեցու, Ստեփանոս Ասողիկի և այլնի աճյունները:

Երկրորդ՝ ինձ հետաքրքրեց վանքի հինավուրց փայտյա դուռը, որի վրա մնում էին բազմաթիվ գնդակների փոսիկներ:

1901 թվի աշունքին՝ 11 նոյեմբերի, տաճկական հետախույզ մի զորամաս գալիս, պաշարում է վանքը, ուր իր մի քանի տղաներով հանգիստ առնելիս է լինում Անդրանիկը: Վանքի հյուրասենյակը թողնելով քաշվում է վանքի մեջ Անդրանիկը և գնդակոծում գրոհները: Մի քանի օր անընդհատ շարունակվում է գնդակահարումը երկու կողմերից, բայց անհետևանք: Անդրանիկը վճռում է պատռել շղթան ու դուրս թռչել: Որոշումը կատարում է խորը գիշերին ու մինչև որ պահակները կահագանգեն և քուն մտած զորամասը ոտի կկանգնի, Անդրանիկը յուրայիններով անհայտանում է<sup>40</sup>:

Այդ օրվանից արդեն մնում են գնդակների փոսիկները վանքի դռան վրա:

Այսպիսի դեպքեր Անդրանիկի գործունեության ընթացքում շատ անգամ են տեղի ունեցել, որոնք տաճիկ ոստիկանության ու հետախույզ զինվորական մասերի բերանում լեգենդար պատմությունների նյութ են դարձել ու սարսափներ տարածել:

Եվ իզուր չէ, որ Անդրանիկի անունը հայ ժողովրդի մեջ մեծ հռչակ է ստացել, չէ՞ որ նրա անվան հետ կապված էր տաճկահայ ժողովրդի տառապանքների վերջ դնելու հույսերն ու երազանքները:

Սակայն Անդրանիկն իր գործունեության վերջին ընթացքում ունեցավ արդյո՞ք իր հռչակին ոչ ներելի սայթաքումներ<sup>41</sup>:

Այո ունեցավ, թեկուզ հենց այն, որ ձգեց Հայաստանը նրա ամենածանր օրերին և գնաց որոնումներ կատարելու<sup>42</sup>:

Ես բախտ ունեցա հանդիպելու Անդրանիկին նախ Վանը հաղթանակելուց հետո ապա Վանի մեծ գաղթի ընթացքում:

Առաջին անգամ հանդիպեցի Անդրանիկին 1915 թվի հունիսի 30-ին Վանա լճի հարավ-արևմտյան ծայրում՝ Վանի և Բիթլիսի վիլայեթների սահման կազմող Թուլս գետի աջ կողմում ձգվող բարձրունքի վրա, այդ ճակատ էր, որպես առաջապահ այդտեղ կանգ էր առել Անդրանիկն իր զորամասով: Անդրանիկի հայացքը պարզ էր, դեմքը ուրախ, ռուսական բանակը հետզհետե առաջանում էր և Անդ-

39 Արևմտյան Հայաստան:

40 Առաքելոց վանքի կոթիվների մասին ավելի մանրամասն տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք II, էջ 41-45:

41 Ակադեմիկոս Ա. Մելքոնյանը դրա պատճառը փնտրում է Անդրանիկի հետևյալ խոսքերում. «Նա-գարբեկովը (Նազարբեկյան - Ռ.Գ., Ռ.Ս.) կիրամայե, Բեյ Մամիկոնյանը կիրամայե, մեյ մըն ալ չկա, որ ես հրամայեմ: Ամենը գեներալ են»: Տե՛ս Մելքոնյան Ա., նշվ. աշխ. էջ 546:

42 Անդրանիկը Հայաստանից հեռացել է 1919 թ. ապրիլին:

րանիկի երագած վայրերը խլվում էին տաճիկների ձեռքից<sup>43</sup>:

Անդրանիկը հեռադիտակը աչքերին դիտում էր լճի հյուսիս-արևմտյան ափերում շարժվող տաճկական հեծելագործների մասերը, դիտում էր այդ ափերից հեռու ցցված Նեմրույթի բարձրունքները, հիշում էր այդ տեղերում իր ունեցած ընդհարումները տաճիկ զորքերի հետ և պատմում էր որոշ դեպքեր:

Երկրորդ անգամ Անդրանիկին հանդիպեցի առաջին հանդիպումից ընդամենը 20 օր անց, հուլիսի 20-ին, Աբաղայի կենտրոնավայր Բերկրի ավանում, այդ հուսալքումի օրեր էր, ռուսական բանակը Վանը թողնում է, հրամանատարի մեկ վճռական խոսքի վրա Վանը, մի քանի շաբաթ առաջ հաղթանակող Վանը գաղթում էր և գաղթում էր խուճապահար, երեսը դարձած դեպի Կովկաս:

Ես, մի քանի հոգով, երկձի մեկ սայլակի վրա բարձած Աղթամարի տպագիր ու ձեռագիր մատյանները առաջ ձգած հասնում ենք Բերկրի ուր և գիշերելու ենք:

Իմանալով, որ Անդրանիկն իր գործառնալով այդտեղ է, որոշում եմ և իմ մեկ ընկերի հետ քայլում եմ դեպի Անդրանիկի վրանը, որը խփված էր ավանի քարքարոտ մեկ լանջի վրա:

Անդրանիկը նստած էր խալու<sup>44</sup> վրա՝ թիկնած բարձին, գլանակը ձեռքին, տրամադրությունն ընկած է, գլուխը քարշ ու սուզված մտածմունքի մեջ:

Բարևեցի, նստեցի ու դիմեցի Անդրանիկին.

–Պարոն Անդրանիկ, մենք մի սայլով տանում ենք էջմիածին Աղթամարի մատենագիրները, իմանալով, որ Դուք այստեղ եք, մտածեցինք այցելել Ձեզ ու տեղեկացնել հետևյալը.

Ժողովրդի մեկ ծայրն արդեն հասել է այստեղ, իսկ մյուս ծայրը կհասնի երեք չորս օրից հետո, զորքը քաշվում է, թշնամին առաջ է շարժվում, վայ մեր ժողովրդին, եթե այս ձորերում նա պաշտպանություն չգտնի: Եթե հնարավոր է, անհրաժեշտ է, որ Ձեր զորամասը մնա այստեղ, մինչև որ Շատախի ու Մոկսի ժողովուրդն այստեղ կհասնի:

Երբ ես վերջացրի, Անդրանիկը հայացքը ձգեց ինձ վրա, դեմքը խոժոռվեց, ջղային տեսք ընդունեց ու մեկնեմ նոռաջ ու սկսեց կշտամբանք ու հայհոյանք թափեց որոշ անձնավորությունների հասցեին:

–Սրիկաներ, գողեր, ավազակներ, բացել և իրենց մեջ բաժանել են Ամերիկայից իմ հասցեով ուղարկված կապոցներն ու նվերները և այլն:

– Պարոն Անդրանիկ, դրանք այսօր չնչին բաներ են: Մեր ժողովուրդը քանդվել, գալիս է, նա ձգել է ամեն ինչ ու ձգնում է փրկել միմիայն իր կյանքը, այդ մասին պետք է մտածել<sup>45</sup>:

Այս ասելով ես սպասում էի, որ նա կհայտարարի, որ ինքը ինքնագլուխ չէ, որ ինքն իր գործառնալով ենթակա է բանակի ընդհանուր հրամանատարությանը և որ շարժվում է համաձայն հրամանատարության հրամանների:

Բայց ես նրանից այդ չլսեցի, գնալով նա ավելի էր բորբոքվում, զայրույթը թափելով նույն անձնավորությունների հասցեին, նույն կապոցների առիթով:

Այլևս ասելիք չէր մնում, հրաժեշտի խոսք ասացի ու դուրս եկա այն տպավորությամբ, որ այդ մոմենտին Անդրանիկի մեջ խոսում էր այլոհուլը:

Ափսոս քեզ ժողովրդական հերոս, ափսոս քո դավանած գաղափարներին, որտեղից որտեղ, ստեղծված ծանր պայմանները, հույսերի խորտակումը, անբացատրելի գաղթն ու ապրումները խախտել էին նրա մեջ հավասարակշռությունը:

Հիշենք մի դեպք ևս Անդրանիկի կյանքից:

43 Ա-Դոյի և Անդրանիկի հանդիպման մասին տես Ա-Դո, Իմ հուշերը, էջ 240-241, 244-245, 260-261:

44 Գորգ:

45 Ա-Դոն հուշերում հետևյալն է վկայում Բերկրիում Անդրանիկի հետ հանդիպման մասին. «Անդրանիկը նստած էր վրանում: Մտայտոտ տեսք ուներ...: Կարճկանի ճակատում նրան հանդիպելուց հետո անցել էր ընդամենը 15 օր, բայց նրա տեսքը բավականին փոխվել էր ու դա հասկանալի էր: Նախորդ հանդիպման միջոցին նա հաղթողի դերում էր ու շարունակ առաջ էր գնում, իսկ այսօր նահանջում է»: Տես Ա-Դո, Իմ հիշողությունները, էջ 260-261:

1920 թվի սկզբի<sup>46</sup> ամիսներին էր, հանրապետական Հայաստանի ջե...<sup>47</sup> մոտ գոյությունը դեռևս շարունակվում էր: Կառավարությունն իր պառլամենտով հազիվ հևիհև կարողանում էր սովի ու վարակիչ հիվանդությունների մեջ տառապող հայ ժողովրդի նվազագույն պարենը, այն էլ մուրալով, հայթայթել և ահա այս ծանր պայմանների մեջ մեկեն էջմիածնից լուր է հասնում, որ Անդրանիկն իր զինվորներով պատրաստվում է խուժել Երևան, ցրել կառավարությունը և պառլամենտը ու հայտարարել դիկտատուրա: Ով այն էլ այն ժամանակ, երբ Տաճկաստանի կողմից հայ ժողովրդի նկատմամբ դավադիր ձեռնարկումները շարունակվում էին:

Այդ լուրը սարսափ ազդեց ոչ միայն կառավարության և պառլամենտի անդամների վրա, այլև ընդհանուր ժողովրդի վրա:

Եվ առանց այն էլ տառապանքներ ապրած հայ ժողովրդի համար սպասվող այն նոր, ահավոր փորձանքը կարելի չէրավ<sup>48</sup> չեզոքացնել շնորհիվ նրա, որ որոշ ազդեցիկ մարդիկ և նույնիսկ կաթողիկոսը միջամտեցին այդ բանին<sup>49</sup>:

\*  
\* \* \*

Ինչպիսի մոտեցում ուներ գեներալ Նազարբեկյանը դեպի այն պարտականությունները, որոնք դրված էին նրա վրա որպես Հայկական կորպուսի հրամանատար:

Կրեերենք այստեղ որպես չափանիշ երկու դեպք նրա գործունեության վերջին շրջանից:

Մայիսի 28-ին Ղարաբիլիսայի պարտությունից հետո, այդ օպերացիայի հայկական զորքերը ցրիվ եկան ու բռնեցին Երևանի և Ղազախի ճանապարհները:

Գնդերի հրամանատարներն իրենց սպայական կազմով, մոտավորապես 100 հոգի Դիլիջանում հրավիրում են խորհրդակցություն և ընտրելով իրենց միջից 20 հոգի ուղարկում են գեներալ Նազարբեկյանի մոտ, որն իր շտաբով այդ միջոցին գտնվում էր Դիլիջանում:

Քսան ներկայացուցիչները բարձրանում են շտաբի շենքի պատշգամբը, դրանցից մեկը բրիգադի հրամանատար, գնդապետ Արդույթյանը, որն այդ միջոցին փոխարինում էր դիվիզիայի պետ [Ալեքսանդր] Բեկ<sup>50</sup> Մամիկոնյանին<sup>51</sup>, վերջինի հիվանդության պատճառով, մտնում է գեներալ Նազարբեկյանի մոտ և նրան հայտնում է, որ սպայությունը ցանկանում է տեսնվել:

Դուրս է գալիս Նազարբեկյանը, բարևում է և մի ամ մի բոլորին ձեռք տալուց<sup>52</sup> հետո հետ է քաշվում և դառնալով շրջան կազմած սպաներին հարցնում է՝ ինչ՞ ունեք ասելու:

Առաջ է գալիս 3-րդ Հայկական հրացանաձիգ գնդի հրամանատար Գոծիկը և

46 1919 թ.: Անդրանիկը Հայաստանից հեռացել է 1919 թ. ապրիլի 28-ին:

47 Մեկ բառ ընթերցելի չէ:

48 Եղավ:

49 Ավելի մանրամասն տես **Սիմոնյան Հ. Ռ.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 571-573: Ակադեմիկոս Հր. Սիմոնյանի կարծիքով, այրյունահեղություն տեղի չունեցավ, քանի որ Անդրանիկը լսեց «Հատկապես հայ սպաների փաստարկները, մասնավորապես այն, որ քաղաքացիական պատերազմը շատ աննպաստ տպավորություն կթողներ օտար հասարակական կարծիքի վրա, ծանր կանդրադառնար Թուրքահայաստանի ձակատագրի վրա, մեծապես կցցեր հայ ժողովրդի վարկը դաշնակից հրամանատարության առաջ», նույն տեղում, էջ 574: Քայլեր ձեռնարկվեցին, որպեսզի Անդրանիկը մնա Հայաստանում: 1919 թ. ապրիլի 24-ին նրա մոտ էջմիածին բանակցությունների համար ուղարկվեց Վարազդատ Տերոյանը: Այդ մասին տես **Սահակյան Ռ.**, Վ. Տերոյանի զեկույցները Արևմտահայ գործադիր մարմնին, ՊԲՀ, 2003, N 2, էջ 287-291, **Սիմոնյան Հ. Ռ.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, էջ 580-581,

50 Բեկ:

51 **Ալեքսանդր բեյ Մամիկոնյան** (1871-1935), ռուսական և հայկական բանակների սպա, մասնակցել է 1904-1905 թթ. ռուս-ձապոնական և Առաջին համաշխարհային պատերազմներին:

52 Ձեռքով բարևել:

ասում է, որ դիվիզիայի ամբողջ զինվորականությունը որոշել է, որ Դուք գնաք տաճկական բանակ և ընդունեք ինչ պայմաններ էլ որ առաջարկեն, միայն թե կռիվը դադարի ու մեզ ճանապարհ տան Թիֆլիս գնալու:

Նազարբեկյանը խոժոռվեց, բարկություն անցավ դեմքի վրա ու ձայնը բարձրացնելով պատասխանեց. «Դուք պահանջում եք, որ ես գնամ տաճկական հրամանատարության մոտ, ընդունեմ ինչպիսի պայման էլ, որ առաջարկեն և պատերազմը դադարեցնեն: Բայց հասկանում եք Դուք, որ ես Հայաստանը նրանց հանձնել չեմ կարող: Հասկանում եք, որ այդպիսի որոշում Ազգային խորհուրդը միայն կարող է անել, և որ ձեր դիվիզիայից բացի կա նաև երկրորդ դիվիզիա, որը թերևս այժմ հաջող գործեր է կատարում: Ձեր առաջարկությունը ես ընդունել չեմ կարող»:

Ապա առաջ է գալիս 1-ին հեծյալ գնդի հրամանատար, գնդապետ Մելիք Շահնազարյանը և ասում.

Ձերդ գերագանցություն, ուրիշ ելք չկա, պետք է անպատճառ գնաք ու կռվին վերջ տաք:

Այս անգամ արդեն Նազարբեկյանը բարկությունից դողալով պատասխանեց.

«Այդ մասին այլևս որևէ բան լսել չեմ ուզում և հրամայում եմ Ձեզ այս րոպեին հավաքեք բոլոր զինվորներին և ուղարկեք Նիկիտինո պահակներ դնելու համար»:

Բոլորովին զինվոր չի մնացել. Ձերդ գերագանցություն, պատասխանում է սպաներից մեկը Նազարբեկյանին:

Այդ դեպքում հավաքվեք, գնացեք ու պահակ կանգնեցեք ինքներդ, արտասանեց այս խոսքերը վճռական տոնով Նազարբեկյանը և ներս մտավ:

Բայց անմիջապես դուրս եկավ գեներալ Վիշինսկին<sup>53</sup> ու դառնալով սպաներին ասաց.

Պարոններ, դուք ստիպեցիք ծերունուն լաց լինել, առաջարկում եք գնալ տաճկական կառավարության ոտը, ընդունել նրա բոլոր պահանջները, հաշտվել ինչ գնով էլ լինի, առաջարկում եք այդ այն մարդուն, որը միշտ հաղթություն է տարել և այդ նույն տաճկական բանակը քանիցս ջարդել ու բռնել է, ուշքի եկեք, մի փոքր լուրջ մտածեք ու հետ վերցրեք ձեր առաջարկությունը:

Չնայած այդ բոլորին՝ Նիկիտինո գնացին միայն երեք հոգի: Դրանք էին՝ 4-րդ հրացանաձիգ գնդի սպաներ Գ. Սարգսյանը, Արշակ Ազնաուրյանը և զինվոր Ավետիք Սահակյանը:

Բերենք գեներալ Նազարբեկյանի անձնավորությունը բնորոշող մի այլ մոմենտ:

Այդ մոմենտը տեղի է ունենում մայիսի 23-ին<sup>54</sup>, վերը բերված հայ սպաների և գեներալ Նազարբեկյանի միջադեպից ընդամենը մեկ օր անց, երբ Ղարաքիլիսայի պարտության կոշմարը այեկոծում է ամենքին:

Այդ մոմենտը մեկ խոսակցություն է, որ տեղի է ունենում հայ գեներալ Նազարբեկյանի և ռուս գեներալ Վիշինսկու մեջ:

Գեներալ Վիշինսկին ըստ երևույթին շատ մոտիկ է եղել գեներալ Նազարբեկյանին, թերևս զինակից նրան ու միանգամայն նրա վստահությունը շահած:

Այդ խոսակցությանը ակնատես է եղել Գագա Տեր-Օհանյանը, զինվորական գործով զբաղված՝ Նազարբեկյանի շտաբում ազատ մուտք ունեցող, որը և պատմել է հետևյալ.

Գեներալ Նազարբեկյանը չնոռանալով մեկ օր առաջ հայ սպաների դիմումը, նրանց բռնած դիրքը դեպի հայ ժողովրդի ստեղծած ներկա ծանր կացությունը և խուսափումը գործելից, դիմում է գեներալ Վիշինսկուն հետևյալ խոսքերով.

53 Վիշինսկի Եվգենի Եվգենի (1873-1918), ռուսական, իսկ 1918 թ.՝ ՀՀ բանակի գեներալ-լեյտենանտ, զինվորական արևելագետ, հետախույզ: 1908-1914 թթ. զբաղեցրել է Էրզրումի գլխավոր հյուպատոսարանի քարտուղարի պաշտոնը: Մահացել է 1918 թ. սեպտեմբերի 30-ին Դիլիջանում:

54 Այստեղ Ա-Դո-ն շփոթել է տարեթիվը: Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին ավելի մանրամասն տե՛ս «Հայոց պատմություն», հատ. 3, գիրք II, էջ 648-652:

-Հարգելի Վիշինսկի, փորձանքներ դեռ շատ են լինելու: Դուք ռուս մարդ եք, ես արձակում եմ Ձեզ Ձեր պաշտոնից, խնդրում եմ՝ վերցրեք Ձեր կնոջը և աղջկան ու գնացեք ուր Ձեզ ցանկալի է:

Լսում է այս Վիշինսկի ու մի փոքր մտածելուց հետո դիմում է Նազարբեկյանին.

-Իսկ Դու՞ք, Ձերդ գերազանցություն:

-Ես հայ մարդ եմ և պարտավոր եմ մնալ ու քամել այս դառնության բաժակը:

Ես Ձեզ չեմ թողնի Ձերդ գերազանցություն, որտեղ Դուք՝ այնտեղ էլ ես ու ես կմնամ Ձեր հետ միասին քամելու այդ դառնության բաժակը:

Պատասխանում է Վիշինսկին ու նստում:

Գեներալ Նազարբեկյանը մինչև վերջ մնաց իր պոստի վրա, իրերի անհամար ձախողումները, պարտությունները և նրանց հաջորդող դժվարությունները անկաբող եղան նրան մղելու դեպի լքումը:

**Տեր-Մարտիրոսյանների ընտանեկան արխիվ, մեքենագիր, պատճեն, թերթ 192-209:**

ԱՐԽԻՎ

Թ. (ԺԵ) Գրարի, թիվ 2 (58), ամբիլ-հունիս, 2017

ՎԼՎ համահայկական հանդես